

ԱՐԴՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՕԼԻՍՊԻԱԴԱ «ՀԱՅՈՑ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻՑԻՑ

Դումկարի 28-ին Արցախի պետական համալսարանում պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել օլիմպիադա «Հայոց պատմություն» առարկայից: Օլիմպիադային մասնակցել են հանրապետության տարբեր համայնքների հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների վեց տասնյակից ավելի աշակերտներ:

Օլիմպիադայի նախաձեռնող, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը, ողջունելով մասնակիցներին, շնորհավորել է Հայոց բանակի օրվա առթիվ՝ խորհրդանշական համարելով հենց այդ օրը «Հայոց պատմություն»-ից օլիմպիադա կազմակերպելը:

«Հայոց պատմությունն ուսումնասիրելն ու իմանալը բոլոր ժամանակներում էլ կարևոր է, կարևոր է հատկապես անցյալի սխալներից դասեր քաղելու, սխալները շտկելու և ներկան ու ապագան ճիշտ կառուցելու առումով», -ասել է



արդեն արնոտ չեն լինի
ու կրենս դրանք իմծ,
երբ արդեն ՏԱՆԾ կլինեմ..

Դու կգաս այնժամ,
երբ արդեն կլինեմ....
արդեն քեզ տանը կտեսնի...
Սեր իմ,
քո համագետի կանաչ լոռության մեջ
ես քեզ երկի չեմ ծանաչի,
(Ճա՞տ ես փոխվել երկի),

«Քո Ժամանակը»

ԱՐՁԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ
ՈՒՍՍՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ



Ն. Սարումյանը: Նրա խոսքով՝ օլիմպիադայի հրավերը լայն արձագանք է գտել դպրոցականների և ուսուցիչների շրջանում, ինչն էլ փաստում է, որ հայոց պատմության հանդեպ սերն ու հետաքրքրությունը կենսունակ է՝ թեպետ քաղաքական վերջին զարգացումները փոքրինչ ազդել են մասնագիտության հեղինակությանը, ինչն էլ բացասաբար է անդրադարձել «Պատմություն» մասնագիտության այս տարվա դիմորդների թվի վրա:

Օլիմպիադայում մրցանակային տեղեր գրանցեցած աշակերտները պարգևատրվել են:

Կփոխվես անչափ,
բայց աչքերդ, աչքերդ նույնը կլինեմ,
Մի քիչ տանջված, արյունոտ, բայց... նույնը...
Բարե, սեր իմ...
Սեր իմ,
դու չեկար,
երբ պատերազմն ավարտվեց,
ու չեկար, որովհետև չհաղթեցինք...
Դու չեկար, սեր իմ, ծաղիկներն արնոտ են,
ու ես էլ՝ ոչ իմ տանը,
Սեր իմ, հեռախոսի փոխարեն մորդ ծեռքին
մկարդ է՝

արյունոտ ու արցունքոտ աչքերով....
Արի մի օր, երբ կրացվի գարունը,
Արի մի օր, երբ կմատամ լոռության մեջ,
Ու արի, երբ նորից հաղթենք ու քեզ հետ տուն
գնամ..

Սեր իմ, քո սրտում արյուն է, իմ հոգում՝ պատերազմ...

Աշխեն Ասրյան,
պատմություն 4-րդ կուրս

Խմբագիր՝ Զ.ՍԱՐՈՒՄՅԱՆ
Հանդիպ պատասխանառու՝
Աննելա Շահամզ,
լրագրություն 2-րդ կուրս
Սպառանալ՝ 400
Տպագրվում է Արցախի
պետական համալսարանի
դրաստավայության
տպարանում
Սեր հասցեն՝ Ա.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսմել մի ժողովրդի
ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
գարեգին նժոյշ՝
ՀՅՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ
2022

ԱՐՁԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆԻ ՈՒՍՍՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՈՒՍՍՈՂԱԿԱՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍ

Փետրվարի 9-ին տեղի է ունեցել Արդյուն լիագումար նիստ, որին ներկա էր նաև Արդյուն ուսանողների, շրջանավարտների և հասարակայության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը: Նիստը վարում էր Արդյուն նախագահ Արա Սարգսյանը, ով իր ելույթում ամփոփ ներկայացրեց ամցած տարում ուսանողական խորհրդի կողմից իրականացված աշխատանքները:



ՈՒՆՉՐՏԱԳ պրոռեկտորը, ողջունելով ուսանողներին, իր ելույթում նշեց ուսանողների հետ տարվող աշխատանքների ոլորտում առկա ծերքերումները, խնդիրները, առաջիկայում կատարվելիք աշխատանքները՝ կարերելով ուսանողների դերը պետության և հասարակության զարգացման գործում:

Նրա խոսքով՝ ուսանողների խնդիրները մշտապես գտնվում են համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում և պարբերաբար տարաբնույթ միջոցառումներ են ծեռնարկվում խնդիրները վեր հանելու և դրանց լուծման ուղղությամբ քայլեր ծեռնարկելու:

Նիստի ընթացքում ՖՈՒՆ նախագահները, ստեղծել բուհ-դպրոց կապն ամրապնդող աշխատանքային խումբ, առաջիկայում ուսանողներին ծանոթացնել գիտական և կուրսային աշխատանք գրելու կարգերին, ստեղծել լեզուների մասնագիտական ակումբներ, մարտական պատրաստության, ազգային պարի, երգի, ասմունքի ակումբ, ՈՒՆՉՐՏԱԳ համագործակցությամբ առաջիկայում կազմակերպել միջազգային գիտաժողով:



ՄՆԱ՞Լ, ԹԵ՛ ԳՆԱԼ



2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի կողմից սամձագերծված ռազմական ագրեսիայի արդյունքում թշնամու օկուպացիայի տակ են հայտնվել Շուշի քաղաքը, Ղաղուրի շրջանը, Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու որոշ գյուղեր: Բնակչության մի մասն ապաստանել է Ղայաստանում և արտերկրում, իսկ մնացածները՝ Արցախում:

Ղարցմամբ փորձեցինք պարզել, թե Արցախում ապրող տեղահանված և չտեղահանված բնակչությունը ապագայի ինչ պատկերացում և տեսլական ունի:

Տեղահանված բնակչության մի մասը՝ մեծամասն Ղաղուրի շրջանից և Շուշիից, անվտանգության խնդիրներ է տեսնում, մյուս մասը գտնում է, որ ոուս խաղաղապահները այստեղ են, որպեսզի մենք անվտանգ ապրենք մեր հողում: Տեղահանվածներին հիմնականում պակասում է աշխատանքը, տունը, իսկ մյուս մասին անհանգստացնում է հայրենիքը, խաղաղությունը, անվտանգությունը:

Ղարցվածների մեծամասնությանը Արցախում պահում է հայրենասիրությունը, մնացածներին էլ՝ աշխատանքը (հիմնականում զինծառայողներ), ընտանիքը, ուսումը: Ղարցվածների մեծ մասը, ովքեր հիմնականում երիտասարդներ են,

չեն պատրաստվում տեղափոխվել Արցախից, որովհետև սիրում են իրենց հայրենիքը, ուրիշ տեղ ապրել չեն կարող և չեն էլ ուզում: Շատ քիչ մասը ցանկանում է հեռանալ Արցախից, քանի որ անվտանգային երաշխիքներ չկան:

Տեղահանվածների մեծամասնությունը լավատեսութեն է տրամադրված Արցախի ապագայի նկատմամբ, իուս ունեն, որ կվերադառնան իրենց նախկին բնակավայրերը, մյուս մասը այս անորոշ վիճակում չի պատկերացնում, թե ինչպիսի ապագա կունենա Արցախը:

Ստեփանակերտում ապրող չտեղահանված բնակչների մի մասը Արցախում իրեն ապահով չի գտում, սպասում է նոր պատերազմի, դժգոհ է դեկավարությունից: Մնացածների համար ևս ապահով է ռուս խաղաղապահների շնորհիվ:

Արցախում հիմնականում մնում են, որովհետև սիրում են իրենց հայրենիքը, չեն պատրաստվում թողնել-հեռանալ: Փոքր մասին Արցախում պահում է ուսումը և ընտանիքը: Մեծամասնությունը իուս ունի, որ հետ կվերադառնենք կորցրած հողերը և կունենանք առաջվա Արցախը:

Ղարցվածների մեծամասնությունը մտադրված չէ հեռանալ Արցախից, որովհետև իրենց տունն ու հայրենիքը այստեղ է, ուրիշ տեղ չեն ուզում ապրել: Մի փոքր մասը, ովքեր հիմնականում իգական սերի ներկայացուցիչներ են և 18-30 տարիքային խմբին են պատկանում, պատրաստվում են տեղափոխվել Արցախից անուսնանալու կապակցությամբ:

Փաստուն, հարցվածների մեծամասնությունը, չեն պահանջուացնող խնդիրների առկայությամբ, չի պատրաստվում հեռանալ Արցախից, որովհետև իրենց հայրենիքն է, այստեղ են հանգչում հերոս տղաների աճյունները, մայր հողը՝ ներկած հերոսների արյամբ, որը ոչ մի դեպքում չի կարելի ուրանալ:

**Ալյոնա Ավագիմյան, Մարտելա Ստեփանյան
«Լրագրություն» 3-րդ կուրս**

ԱՐՑԱԽՈՒՍ ՌԱԴԻՈ ԼՍՈՒՄ ԵՆ

Գլոբալզացիաի դարաշրջանում մարդիկ այլևս չեն պատկերացնում իրենց կյանքն առանց ինտենսիվ տեղեկատվության: Ավանդական ԶԼՍ-ները կարծեն թե այլևս պահանջված չեն և իրենց տեղը վաղուց զիջել են սոցիալական մեղիային, երբ մեկ հայումով հնարավոր է ստանալ ցանկացած տեղեկություն:

Չնայած այսպիսի միտումներին, Արցախում նախորդ տարի տեխնիկապես վերակազմավորվել, վերազինվել ու ամրողական եթերացանկ է փոխել Արցախի հանրային ռադիոն:

Թե որքանով է պահանջված ռադիոն Արցախում, փորձեցինք ճշտել հանրության շրջանում մեր կողմից անցկացված հարցումների արդյունքում:

Զրուցելով տարբեր սերի և տարիքի ստեփանակերտցիների հետ՝ պարզեցինք, որ մեծամասնությունը բացարձակապես ռադիո չի լսում: Ղարցվածների մի ստվար զանգված նշում է, որ նախընտրում է ժամանակակից մեդիան: Մի մասը ռադիո չի լսում համապատասխան սարքավորում չունենալու պատճառով: Ռադիոյի մշտական ունկնդիրների շարքում են միջին և միջինից բարձր տարիքային խմբի մարդիկ, առավելապես՝ վարորդները:

Կան նաև պասիվ ռադիոլսոդներ. լսում են



**Ես են տղեն մատաղ ինիմ
Վեր սըրտա ըրալ կոեվ քինա:
Ես են տղեն մատաղ ինիմ
Վեր հըղըցան յետ չի տէռալ:
Մատաղ ինիմ ես էն տղեն
Օթ օր սոված վեր կացալա,
Օթ օր ծարավ տեմա կացալ,**



հանգամանքների բերումով՝ օրինակ, երթուղայինում կամ տաքսիում, այն էլ՝ առավոտյան ժամերին: Ղարցվածների մեծամասնությունը նախընտրում է Արցախի հանրային ռադիոն, թիզ մասը՝ Ազատություն ռադիոկայան, Մեդիամաքս: Պարզվում է նաև, որ պատահաբար են միանում և տարբերություն չկա, թե որ ռադիոալիքն են լսում, կարևոր նորություն լինի:

Կատարված հարցումները թույլ են տալիս եզրակացնել, որ Արցախի հասարակության մեծամասնությունը ռադիո չի լսում, միտված չէ ռադիոյից տեղեկատվություն ստանալուն: Բայց ևայնպես ռադիոլսոդների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է տեղական ռադիոյին, մասնավորապես Արցախի հանրային ռադիոյին:

**Ասպրամ Ավանեսյան,
Կրիստինա Ղարիմանյան
«Լրագրություն» 3-րդ կուրս**

**Են վեր լուզուն ճուր կըտըրած
Քառասչորս օր պենո կացալա:
Ես էղ տղեն մատաղ ինիմ
Վեր աշկը չորսա քոն իլալ,
Վեր աշկը պեց՝ քոնչի իլալ:
Վեր զենք զրահ մեշկին կալած
Քըրծերնա լալ յէր իլած:
Մատաղ ինիմ ես էտ տղեն
Թորքին ըրջին վեր կաղնածած
Մատաղ ինիմ ես էղ տղեն,
Վեր ուրան հայ ինելավը
Ես իմ տանըս հայում մնամ:**

**Ոիտա Վանեսյան, հայոց լեզու և
գրականություն, 1-ին կուրս**